

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ 20 ՏԱՐԻՆ

Այս տարվա նոյեմբերին լրանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման քսանամյակը:

Այդ առթիվ խմբագրությունը խնդրեց Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանին պատմել պարբերականի ընթերցողներին հայ գիտության օջախի վերջին տարիների նվաճումների և ներկայումս տարվող աշխատանքների մասին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր քսանամյակը դիմավորում է գիտական կարևոր պրոբլեմների մշակման գործում ձեռք բերած որոշակի նվաճումներով: Այդ նվաճումների արժեքն առանձնապես մեծ է, որովհետև դրանց մեծ մասն ունի ոչ միայն տեսական, այլև ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն:

Գիտական հետազոտությունների հաջող անցկացմանը զգալի չափով նպաստեց Ակադեմիայի գործունեության վերակառուցումը, որն անցկացվեց այս տարվա ընթացքում ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի 1963 թ. ապրիլի 11-ի որոշման համաձայն:

Վերակառուցումը թույլ տվեց գիտական ուժերն ու նյութատեխնիկական միջոցները կենտրոնացնել բնական և հումանիտար գիտությունների ակտուալ պրոբլեմների լուծման վրա:

Զգալիորեն մեծացել է գիտական հետազոտությունների ծավալը ՖԻԶԻԿԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ:

Մեր գիտնականները նոր, նշանակալից արդյունքների են հասել մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, ռադիոաստղագիտության, ռադիոֆիզիկայի և հաշվողական մաթեմատիկայի բնագավառներում:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում կատարված աշխատանքները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների ամբողջ կոմպլեքսի վարձացման, այլև ժամանակակից տեխնիկայի որոշ պրոբլեմների լուծման համար:

Ժողովրդատնտեսական բացառիկ կարևոր նշանակություն ունեն ինստիտուտում սկսված հետազոտությունները ապակեպլաստիկների և մանրաթելերի սողքի և ամրության ուղղությամբ:

Բյուրականի աստղադիտարանում ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի ղեկավարությամբ աշխատանքներ են տարվում արտաքին գալակտիկաների, ոչ ստացիոնար աստղերի և գալակտիկ միգամածությունների բնագավառում:

Վերջին 2—3 տարում խոշոր աշխատանք է արված գերխիտ աստղերի՝ սպիտակ թվուկների հայտնաբերման ուղղությամբ:

1962 թ. սկսած ծրագրային դիտումներն անց են կացվում աշխարհի ամենախոշոր դիտակներից մեկով՝ Շմիդտի սիստեմի մեկ մետրանոց դիտակով: Օբյեկտիվ պրիզմայի կիրառումը հնարավորություն տվեց ստանալու մի քանի գալակտիկաների և մոլորակային միգամածությունների սպեկտրները: Մասնավորապես, Մ—32 գալակտիկայում հայտնաբերված են իոնացված ջրածնի ամպեր:

Չափազանց հետաքրքիր տվյալներ են ստացվել գալակտիկաների կորիզների ուսումնասիրության բնագավառում: Այդ տվյալները հնարավորություն են տալիս նոր ելրակացություն անելու գալակտիկաների կորիզների էվոլյուցիոն դերի մասին:

Նոր կարևոր արդյունքների են հասել ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը և ֆիզ-մաթ. գիտ. դոկտոր Գ. Ս. Սահակյանը՝ աստղերի գերխիտ կոնֆիգուրացիաներին նվիրված իրենց տեսական աշխատանքներում:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում հետազոտություններ են տարվում ռադիոաստղագիտության, ռադիոֆիզիկայի, վակուումային էլեկտրոնիկայի և լուսնեսցենցիայի ուղղությամբ: Այստեղ ստեղծվել են գերբարձր հաճախականությունների նոր անտենային սիստեմներ, որոնք օժտված են լուծունակության մեծ ուժով, աղմուկի ցածր մակարդակով և այլն: Այդպիսի հատկություններ ունեցող անտենային սիստեմների ստեղծումը ժամանակակից ռադիոֆիզիկայի ակտուալ պրոբլեմներից է:

Հայկական ՍՍՌ ԳԱ և Երևանի Պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնում շարունակվում են աշխատանքները Հայաստանի և Միության այլ ռեսպուբլիկաների ձեռնարկությունների համար մաթեմատիկական, տրամաբանական և կիրառական խնդիրների լուծման ուղղությամբ:


Սիստեմատիկաբար աշխատանքներ են տարվում էլեկտրոնային մեքենաների կատարելագործման, ինչպես նաև նրանց շահագործման ռացիոնալ մեթոդների մշակման ուղղությամբ:

Զգալի են հաջողությունները մեքենայական թարգմանության ասպարեզում:

#### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հետազոտվում են ռեսպուբլիկայի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման օրինաչափությունները, ինչպես նաև մշակվում են երկրակեղևի խորքում թաքնված հանքամարմինների հայտնաբերման որոնողական չափանիշները և այլն:

1636-ա.



8015-63



Երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության հետ միասին կոմ-պլեքս աշխատանքներ են տարվում ռեսպուբլիկայի նավթագազաբերության հեռա-նկարները պարզելու ուղղությամբ: Ինստիտուտը ձեռնարկել է ռեսպուբլիկայի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների բազմամյա հետազոտու-թյունների արդյունքների ամփոփման աշխատանքներին:

**Օրգանական քիմիայի ինստիտուտում** ավարտվել է ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող չորս աշխատանք: Դրանցից մեկը՝ կավահողի պնևմոտը-րանսպորտը և նրա կենտրոնացված բաշխումն ըստ էլեկտրոլիտրոների, հաջողու-թյամբ ներդրվում է ալյումինի արտադրության մեջ: Դրա տնտեսական էֆեկտը շատ մեծ է:

Միության մեջ լայն ճանաչում է գտել ինստիտուտում սինթեզված քլորացված պոլիտրիենը՝ ռետինը մետաղին կպցնող ունիվերսալ նյութը:

Կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն ունի նաև ինստիտուտի կող-մից մշակված նոր կարբինոլային սոսնձի և բարձրորակ պլաստիֆիկատորի ներ-դրումը:

**Գեոֆիզիկայի և ինժեներական սելսմոլոգիայի ինստիտուտը**, որ ստեղծվել է վերջին տարիներս, կարևոր նշանակություն ունեցող հետազոտություններ է կատա-րել ռեսպուբլիկայի տերիտորիայի խորքային կառուցվածքի ուսումնասիրության և հակասելսմիկ կառուցումների գծով միջոցառումների մշակման ուղղությամբ:

Բնական գազի ուղղակի օքսիդացման միջոցով ոչ մեթանոլային ֆորմալդեհի-դի ստացման ուղղությամբ հետաքրքրական աշխատանքներ են տարվում **Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում**, որը նույնպես կազմակերպվել է վերջերս:

**ԿԵՆՍՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** բաժանմունքի հիմնարկությունների գործունեության համար մեծ նշանակություն ունեցավ պարտիայի և կառավարության այս տարվա հունվարի որոշումը՝ «Կենսաբանական գիտությունների հետազա-վարագացման և պրակտիկայի հետ նրա կապի ամրապնդման մասին»: Դրան համա-պատասխան հիմնովին վերամշակվեց մի շարք հիմնարկների թեմատիկան: Գիտա-կան աշխատանքների բարձր մակարդակի ապահովման համար մեծ ուշադրություն է դարձվում հետազոտությունների նորագույն մեթոդների կիրառմանը: Աշխա-տանքներ են սկսված բույսերի վնասատուների դեմ բիոլոգիական պայքարի մեթո-դի մշակման ուղղությամբ: Որոշակի աշխատանք է կատարվել կենսաբանական և հարակից գիտությունների նորագույն ուղղությունների գծով կադրեր պատրաստե-լու գործում և այլն:

**Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում** ուսումնասիրվում է օրգանական նյութերի քիմիական կառուցվածքն ու նրանցից բուժիչ պրեպարատներ պատրաս-տելու հարցերը:

**ՍՍՌՄ Առողջապահության մինիստրությունը** որոշում է ընդունել՝ արփենալ, սուրբիտոլին, կվատերոն, մարսաֆեն—56 պրեպարատները բժշկական պրակտիկա-յում մասսայականորեն ներդնելու մասին:

Բժշկական պրակտիկայի պահանջները ապահովելու համար ինստիտուտը շարունակում է արտադրել մեծ քանակությամբ գանգլերոն և դիթիլեն պրեպա-րատներ:



**Բիոքիմիայի ինստիտուտում**, որ կազմակերպվել է 1961 թ. բիոքիմիայի սեկտորի բազայի վրա, աշխատանքներ են տարվում «Ուղեղի ֆունկցիոնալ բիոքիմիա» պրոբլեմի ուղղությամբ, որի նպատակն է պարզաբանել ուղեղի տարբեր մասերի բիոքիմիական դերը:

Գամմա-ամինոկարագաթթվի տեսական ուսումնասիրությունների հիման վրա Բիոքիմիայի ինստիտուտը նյարդային հիվանդությունների կլինիկայի հետ համատեղ հետազոտվում է ԳԱԿԹ-ի փոխանակությունը գլխուղեղի տարբեր օրգանական վնասվածքների ժամանակ (ուռուցքներ, դեգեներատիվ պրոցեսներ):

Գլխուղեղի հիպոթալամ-հիպոֆիզար սիստեմում հայտնաբերված են հորմոն-հերմենտատիվ տիպի նյութեր, որոնք բարերար ազդեցություն ունեն արյան կորոնար շրջանառության վրա:

**Բուսաբանության ինստիտուտում** շարունակվում է Հայաստանի բուսականության բազմամյա ուսումնասիրությունների ամփոփումը: «Հայաստանի ֆլորան» հնգահատոր աշխատությունը ի մի է բերել ռեսպուբլիկայի բույսերի ուսումնասիրումը, որոնց ռացիոնալ օգտագործումը մեծ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության համար: Լայնորեն ուսումնասիրվում են նյութափոխանակության ֆիզիոլոգա-բիոքիմիական առանձնահատկությունները՝ ծառատեսակների պտղատվությունը ղեկավարելու նպատակով:

Ստացված են նոր տվյալներ ռեսպուբլիկայի բուսական ռեսուրսների վերաբերյալ:

**Կենդանաբանության ինստիտուտում** գյուղատնտեսական կենդանիների հեղմինթուների ուսումնասիրման հիման վրա մշակված է նրանց պաթոգենիկ թերապիան:

Հետազոտություններ են տարվում Հայաստանի ֆաունայում օգտակար կենդանիների ու միջատների և վնասատուների հայտնաբերման, ինչպես նաև ռեսպուբլիկայի համար նոր կենդանիների կլիմայավարժեցման և բնակեցման ուղղությամբ:

Այս տարվանից սկսած ինստիտուտում աշխատանքներ են տարվում բույսերի վնասատուների դեմ պայքարի նոր մեթոդների ուսումնասիրության ասպարեզում:

**Միկրոբիոլոգիայի ինստիտուտում** հետազոտություններ են տարվում ընդհանուր միկրոբիոլոգիայի ուղղությամբ: Մեծ աշխատանք է կատարվում միկրոբային ակտիվ մետաբոլիտների հայտնաբերման և օգտագործման գծով: Ինստիտուտում հայտնաբերված են հողային միկրոօրգանիզմների շտամները, որոնք արտադրում են բույսերի աճին նպաստող նյութեր:

Ապոտաբակտերիաների ակտիվատորների մի շարք կոկտուրաներ դաշտային փորձարկումներ անցել են շաքարի ճակնդեղի ցանքերի 250 հեկտար տարածության վրա: Սրա արդյունքը շաքարի ճակնդեղի բերքատվության 20—30 %-ի և շաքարայնության 1—2 %-ի ավելացումն է:

Ագրոքիմիայի լաբորատորիայում 1961 թ. սկսած հետազոտություններ են կատարվում բույսերի ֆոտոսինթեզի ինտենսիվացման ուղղությամբ:



1962 թ. շահագործման է հանձնված հիդրոպոնիկական բաց սարքավորում, 960 մ<sup>2</sup> օգտակար տարածությամբ:

Մշակված և պատրաստված է փորձառական փորձնական ավտոմատ սարքավորում (ֆաբրիկա), որն արտադրում է վիտամիններով և հանքանյութերով հարուստ կանաչ ու հյութալի կեր: Այդ սարքավորման 1 մ<sup>2</sup>-ի արտադրողականությունը մի քանի հազար անգամ գերազանցում է բնական խոտադաշտի 1 մ<sup>2</sup>-ի արտադրողականությանը: Լաբորատորիայի օգնությամբ Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայում կառուցվում է նման սարքավորում:

**Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում** լայն հետազոտություններ են տարվում կենտրոնական նյարդային համակարգության խախտված ֆունկցիաների վերականգնման ուղղությամբ՝ կապված այդ համակարգության օրգանական վնասվածքների հետ:

Այստեղ կարճ ժամանակամիջոցում ստեղծվել է հավերի նոր ցեղ (երևանյան), որը տեղական ցեղին գերազանցում է ձվատվությամբ՝ 2 անգամ, բաշով 40—50 տոկոսով:

Ապացուցված է գյուղատնտեսական թռչունների ուլտրամանուշակագույն ճառագայթաճարման բարձր էֆեկտիվությունը, որը փոխարինում է թանկարժեք դեֆիցիտային ձկան յուղին (վիտամին «դ»):

**Սևանի հիդրոբիոլոգիական կայանում** ուսումնասիրվում են լճերի, ջրամբարների և գետերի ֆլորան ու ֆաունան և ռացիոնալ ձկնատնտեսության կենսաբանական հիմունքները:

Հայաստանի մյուս ջրամբարների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կարելի է ձկնաբուծություն սկսել նաև Հոկտեմբերյանի ավազահանքի լճում և Մեծամոր, Արփա ու Որոտան գետերում:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** վարձացման համար կարևորագույն ուղենիշ հանդիսացան ՍՄԿՊ XX և XXII համագումարների պատմական որոշումները:

Անձի պաշտամունքի մերկացումը խոշոր նշանակություն ունեցավ հասարակական գիտությունների բոլոր ճյուղերի վարձացման, հետազոտողների պրպտող մտքի աշխուժացման համար: Անձի պաշտամունքի վնասակար հետևանքների հաղթահարումը թույլ տվեց ոչ միայն վերականգնել պատմական ճշմարտությունը, այլև հասարակական գիտությունների բնագավառի աշխատողների գործերն ապատեց դոգմատիկմի, սխեմատիկմի և տիրացուականության ծանր բեռից:

Հասարակական գիտությունների հիմնարկների կարևոր խնդիրներից է կոլեկտիվ ամփոփիչ աշխատությունների ստեղծումը: Այսպես, օրինակ, պատմության ինստիտուտի կոլեկտիվը աշխատում է «Հայ ժողովրդի պատմություն» (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) բառահատոր աշխատության վրա, գրականության ինստիտուտը՝ «Սովետական գրականության պատմության» և «Հայ նոր գրականության պատմության» հատորների ստեղծման վրա: Լեզվի ինստիտուտում հրատարակության է պատրաստվել «Հոմանիշների բառարան» կապիտալ աշխատությունը և աշխատանք է տարվում «Հայոց լեզվի բացատրական բառարան» կապմելու ուղղությամբ:

Առաջին քայլերն են արված հասարակական և բնական գիտությունների միջև կոնտակտներ սահմանելու ուղղությամբ, որը ներկայումս հանդիսանում է գիտական առաջընթացի կարևոր պայմաններից մեկը: Այսպես, փիլիսոփայության և իրավունքի սեկտորը մշակում է «Ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերը» պրոբլեմի մի շարք թեմաներ, Լեզվի ինստիտուտը ՀՍՍՌ, ԳԱ և Պետական համալսարանի հաշվողական կենտրոնի հետ միասին աշխատում է մեքենայական թարգմանության մի շարք պրոբլեմների վրա:

Ես շատ համառոտակի նշեցի, ավելի ճիշտ, բերեցի մեր գիտնականների հաջողված գործերի ոչ լրիվ թվարկը:

Իսկ թե որքա՛ն աշխատանք, մտքի ի՛նչպիսի լարում և որքա՛ն ժամանակ է պահանջում ամեն մի գործ, որպեսզի այն հաջող լուծում ստանա, այդ մասին թող պատմեն գրողները, ժուռնալիստները:

